ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՅԻ ԱՆՎԱՆ
Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱ Ն ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Ինֆորմատիկա

Մասնակից՝ Աննա Վարդանյան

Թեմա՝ «Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներինն համապատասխան»

Ղեկավար՝ Գայանե Կոստանդյան

ԵՐԵՎԱՆ 2023

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հետազոտության արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է զարգացող և փոխակերպվող հասարակության մեջ դաստիարակության հոգեբանական առանձնահատկություններով, որոնք արդյունքն են ժամանակակից մարդու աշխարհայացքի փոփոխության: Դաստիարակությունը հավերժական կատեգորիա է: Այն պայմանավորված է դաստիարակության՝ տարիների ընթացքում կուտակված կենսունակ փորձի, կիրառված միջոցների արժևորման, արդիականության տեսանկյունից իմաստավորման և մանկավարժական արդի պրակտիկայում կիրառելու անհրաժեշտությամբ: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է,ավանդույթների, սովորությունների , մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման,կայացման հարցում:

Դասիարակության նպատակի էությունը կատարյալ մարդու ձևավորումն է, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Դասիարակության կարևորագույն գործառույթն է հասարակական այնպիսի անհատ ձևավորելը, որը կշարունակի յուրացնել հասարակության կողմից ընդունված նորմերը, որակներն ու արժեքները, ինչպես նաև մշտապես կիրագործի համամարդկային և արժեքավոր արարքներ: Դաստիարակությունը միտված է զարգացնելու այնպիսի մարդկային որակներ, ինչպիսիք են հումանիզմը, կելոկտիվիզմը, ինտերնացիոնալիզմը, հայրենասիրությունը, քաղաքացիական դաստիարակությունը և գիտակցական կարգապահությունը: Սույն աշխատանքում կարևորվում է ծնող- ուսուցիչ կապը, որ միտված է հասարակության համար պիտանի և դաստիարակված անհատ

ձևավորելուն: Չէ՞ որ դաստիարակության հենասյուներից մեկն ընտանիքն է, իսկ մյուսը՝ դպրոցը:

Համաշխարհային մանկավարժական մշակույթում ընտանեկան, հասարակական և քաղաքացիական դաստիարակության գործընթացների փոխկապակցվածության հարցերին անտիկ շրջանի մտավորականներից անդրադարձել են Կոնֆուցիուսը, Հերոդոտոսը, Պլատոնը, Արիստոտելը, Ցիցերոնը: Մանկավարժական գիտության ականավոր ներկայացուցիչներ Յ.Ա. Կոմենսկին, Յ. Հ. Պեստալոցցին, Ա. Դիստերվեգը, Կ. Դ. Ուշինսկին:

Հայկական ուսուցանող քաղաքակրթության մանկավարժական մշակույթի զարգացման գործընթացում առանձնակի դեր են ունեցել Մ. Մաշտոցի, Մ. Խորենացու, Գր. Նարեկացու, Առ. Սյունեցու, Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Մ. Նալբանդյանի, Ա. Բահաթրյանի, Ռաֆֆու՝ դաստիարակության վերաբերյալ փորձն ու տեսագործնական մոտեցումները:

Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության, զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա, ինչպես նաև ծնողների ուսուցման գործընթացին ներգրավվածության աստիճանի բարձրացմանը: Ժամանակակից աշխարհում տեխնիկայի զարգացումն իր հետքն է թողնում ոչ միայն աշակերտների կենցաղավարության վրա, այլև նրանց ծնողների: Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգարավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներում: Այսօր ուսուցիչներիս գործունեությունն իր առջև նպատակ է դնում զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-սովորողի ծնող կապը՝ միտված սովորողի կրթության կազմակերպման, դաստիարակության,

ինչպես դասարանական, այնպես էլ արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության հարցում:

Ուսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

- հող նախապատրաստել, որպեսզի ընտանիքն առավելագույն դրական ազդեցություն թողնի սովորողի վրա,
- բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան,
- ծնողին մասնակից դարձնել իր երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացին:

Հետազոտության հիմնախնդիրն է ուսումնասիրել դաստիարակության արժեքների վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու գիտելիքները, հիմնավորվել դաստիարակության բաղադրիչի կարևորությունը կրթության բովանդակության մեջ և մանկավարժական արդի պրակտիկայում և բացատրել դաստիարակության ձևերի փոփոխությունները՝ որպես ժամանակի հետ առաջ եկող պահանջ: Ժամանակին համահունչ քայլելով՝ փոխվում են նաև դաստիարակության ձևերն ու մոտեցումներն արդի հասարակության մեջ: Դաստիարակության խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում այնպիսի մարդկային բարձր որակներ, ինչպիսիք են՝ հումանիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակություն:

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ: Սույն Հետազոտական աշխատանքի խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, փորձել գտնել լուծումներ առաջացած

խնդիրներին: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը: Աշակերտի կրթադաստիարակչական գործընթացում անփոխարինելի են դպրոցն ու ընտանիքը:

Անձի դաստիարակությունն ու զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից, որում նա ապրում և կազմավորվում է որպես անհատ: Եթե չլինեն նպաստավոր պայմաններ և առողջ մթնոլորտ, ապա անձի բարոյական զարգացումը չի կարող կրել կայուն բնույթ:

Հին աշխարհի փիլիսոփաներն իրենց աշխատություններում արտահայտել են մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը: Հենց այդ ժամանակաշրջանում էլ նրանք կոչ արեցին աճեցնել հոգեպես ու մարմնապես գեղեցիկ սերունդ: Այս պահանջի հիմքում ընկած էր հոգեկան զարգացման և մարմնական գեղեցկության գաղափարը: Նրանք գտնում էին, որ մարդը դրան կարող է հասնել հոգևոր մշակույթին, արվեստին, մարմնամարզությանը հաղորդակցվելով:

Վերածննդի դարաշրջանում մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը նոր հնչեղություն ստացավ: Հումանիստ մանկավարժները հռչակեցին մարմնական ու հոգեկան գեղեցկության պաշտամունքը: Նրանք կոչ արեցին հաճույք ստանալ գեղարվեստական գրականությունից, արվեստից, երաժշտությունից:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջը նոր երանգ ստացավ ուտոպիստ սոցիալիստներ Թ. Մորի, Թ. Կամպանելլայի, Սեն-Սիմոնի, Շ. Ֆուրյեի, Ռ. Օուենի գաղափարներում: Նրանք խնդիր դրեցին համակողմանի ու ներդաշնակ զարգացում ապահովել բոլոր խավերի երեխաների համար: Աշխատանքը համարեցին պարտադիր պահանջ բոլորի համար:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը հետաքրքրեց ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր ու բարոյական դաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց, Ժ.Ժ. Ռուսոն պահանջեց, բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հիմնախնդիրը դեռ վաղ ժամանակներից հետաքրքրել է նաև հայ դասական մանկավարժներին: Նման գաղափարներ են արտահայտել Դավիթ Անհաղթը /5-6-րդ դարեր/, Ա. Շիրակացին /7-րդ դար/, Հովհ. Սարկավագը /1054-1129/, միջնադարի կրթական այլ գործիչներ:

Խ. Աբովյանն անձի համակողմանի զարգացման հիմնախնդիրը կապում էր նոր տիպի դպրոցի ստեղծման հետ: Նա, համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարի մեջ մեծ դեր է հատկացնում մտավոր կրթությանը, բարոյական, գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը: Արևմտահայ մանկավարժ Ն. Զորյանը /1821-1859/ դպրոցի նպատակը տեսնում էր անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումն ապահովելու, սովորողին ռեալական գործնական անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելու, աշխատանքային կենսական կարողություններ, հմտություններ ձևավորելու մեջ: Մ. Նալբանդյանը /1829-1866/ դպրոցի վերաբերյալ իր դրույթներիկց մեկում գրում է. <<Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը>>: Ղ. Աղայանը /1840-1911/ նույնպես կիսել է համակողմանի զարգացման կարևորության գաղափարը:

Դաստիարակության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերի փոխկապակցված, ամբողջական, լրիվ չափով իրացումը կատարվում է ոչ թե

ինքնին, այլ կազմակերպված, նպատակաուղղված ուսուցման և դաստիարակության միջոցով: Դաստիարակության նպատակը, որպես գիտական հասկացություն, որոշակի գերծունեության արդյունքի՝ գիտակցված պատկերացումն է:Անձի համակողմանի զարգացումը հասարակական պահանջ է, որը որպես հայտնագործություն ոչ մի հասարակարգի չի պատկանում: Այդ գաղափարը աստիճանաբար որակական փոփոխություններ կրելով, զարգացման երկարատև էվոլյուցիա ապրելով, հին դարերից հասել է մեր դարաշրջան ու ներկայացել որպես հասարակական պահանջ: Դա ողջ մարդկությանը ներկայացվող պահանջ է: Անձի համակողմանի զարգացման հարցում, բացի ժառանգականությունից, կարևոր դեր են խաղում նաև կրթությունն ու դաստիարակությունը: Դրանց ճիշտ կազմակերպումն ու իրականացումը կախում ունեն դրանց համար ստեղծված պայմաններից, ընտրված մեթոդներից, հնարներից ու միջոցներից, կրթողից ու դաստիարակողից: Պետք է իմանալ, որ դաստիարակության, ուսուցման և կրթության արդյունավետության կախում ունեն նաև կրթվողից ու դաստիարակվողից, նրա՝ իր նկատմամբ ունեցած ակտիվությունից, ինքնազարգացումից, ինքնիրացումից, ինքնահաստատումից, նրա ինքնակրթությունից ու ինքնադաստիարակությունից: Դաստիարակության գործընթացի նպատակադրումը մանկավարժության ամենաբարդ խնդիրներից է: Դաստիարակության գործընթացի նպատակադրման հարցը միշտ հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, որոնք փորձել են պատկերել մարդկային էության կատարելակերպը, առաջարկելով դրա ձևավորման տարբեր եղանակներ: Դաստիարակության իդեալական նպատակը կատարյալ մարդու, այն է՝ համակողմանի ու ներդաշնակ զարգացած անձնավորության ձևավորումն է: Դաստիարակության ռեալ նպատակն ուղղված է վաղվա հասարակության կողմից պահանջված անձնային հատկությունների ձևավորմանը: Դաստիարակության իրատեսական նպատակն իր մեջ ներառում է տվյալ

հասարակության պատմական ու աշխարհագրական, սոցիալ- տնտեսական և սոցիալ- մշակութային, էթնիկ ու բարոյահոգեբանական առանձնահատկությունները և մշակվում է պետության քաղաքականության գերիշխող գաղափարախոսության համաձայն: Դաստիարակության ռեալ նպատակը լավագույնս արտացոլում է հասարակության և պետության դեմքը:

Մարդկության զարգացման հետ մեկտեղ փոխվում են հայացքներն ամեն ինչի վերաբերյալ. անմասն չի մնում նաև դաստիակությունը: Եթե նախորդ դարում դաստիարակություն ասելով մարդիկ հասկանում էին հասարակությանը հնազարդ և հարմարվող անհատ ձևավորելը, ապա այսօր դաստրակաություն եզրույթի տակ հասկանում ենք հասարակության համար ճկուն անհատ ձևավորելը: Դաստիարակությունը, ճիշտ է, ողջ կյանքում ընթացող ժարունակական երևույթ է, բայց դրա խորն արմատները ձգվում են վաղ մանկության տարիներին: Համաձայն մանկավարժների, անհատն իր բնավորության գծերով ձևավորվում է մինչև 6 տարեկան հասակը, դրանից հետո նա դրսևորում է այն ամենը, ինչ սերմանվել է իր մեջ վաղ մանկության տարիներին:

Դաստիարակության հարցն այսօր շատ լուրջ է, քանի որ ներկա սերունդն ավելի շատ տեղեկատվություն ունի, շուտ է զարգանում, ուստի հատուկ մոտեցում է պետք:

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է: Եվ նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին: Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը:

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը:

Այսօր բոլորիս խնդիրն է հասարակության համար պիտանի անհատ ձևավորելը. անհատ, ով ճկունորեն կհարմարվի ցանկացած փոփոխության և կյանքի ցանկացած մարտահրավեր կկարողանա հավուր պատշաճի ընդունել և հաղթահարել: Ինչպես մարդկանց աշխարհընկալումը, այնպես էլ դաստիարակությունը տարբեր են անհատից անհատ, ծնողից ծնող. եթե մի ծնող գերադասում է դաստիարակել ընկճված անհատ, միայն թե հասարակության աչքին ինքը դիտարկվի որպես առաքինի ծնող, մյուս ծնողը գերադասում է ձևավորել լիարժեք անհատ՝ իր սկզբունքներով, տեսակետով և կարծիք հայտնելու իրավունքով:

Եթե նախորդ դարում դաստիարակություն ասվածն անմիջականորեն կապված էր ծնողի՝ ակտիվ գործունեությամբ, ապա այսօր դաստիարակությունն ունի նաև այլընտրանքային տարբերակներ. ինտերակտիվ խաղեր, տեսահոլովակներ:

Մանկությունը երեխայի կյանքն է, այլ ո՛չ թե կյանքին նախապատրաստելու ժամանակաշրջանը. նա ապրում է այստե՛ղ, հենց հիմա՛:Մանուկն անպաշտպան է և մեծերի օգնության ու աջակցության կարիքն ունի, ուստի մեծահասակները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար.չէ՞ որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկության տարիներին: Հիշե՛նք մի պարզ ճշմարտություն. որքան ամուր են զարգացման և կայացման հիմքերը, այնքան մեծ է ապագայում հասարակության լիարժեք անդամ ձևավորելու երաշխիքը:

Ինչպես ասել է Պ. Սևակը.«Աշխարհին մանկան մաքրությունն է պետք»։ Ուրեմն թու՛յլ տանք մանուկին լինել մանուկ՝ ի հեճուկս հանգամանքների։ Ըստ իս, մարդկության կարևորագույն խնդիրներից և առաքելություններից է երեխաների համար գեղեցիկ աշխարհ կառուցելը, հենց այն նույն կատարելությամբ, ինչպիսին նրանք հանդիպում են հեքիաթներում՝ գունեղ ու առեղծվածային, որտեղ գլխավոր հերոսները հենց իրենք՝երեխաներն են, ովքեր ունեն առաքելություն՝ինչպես հեքիաթի հերոսը՝ օգնելու մեծերին կառուցել ապագան։ Մենք պե՛տք է լսենք երեխաների ձայնը և ապահովենք նրանց մասնակցությունն ամենուր. չէ՞ որ նրանք ստեղծագո՛րծ քաղաքացիներ են։ Պետք է թու՛յլ տալ մանկանը գիտակցել կարծիք հայտնելու իր իրավունքը, իր մասնակցության կարևորությունը. այս ամենը կնախապատրաստի նրան իր կայացման ճանապարհի հենց սկզբից, երբ առջևում հառնող հաղթագագաթը շատ բարձր է թվում, կածաններն անհասանելի, իսկ ուժերը սակավ։

Մեծահասակները պետք է գիտակցեն, որ ազգի ապագան կախված է աճող սերնդի ֆիզիկական և հոգևոր առողջությունից։ Երեխան լիարժեք մարդ է ինչպես մեծահասակներիցս յուրաքանչյուրը՝ իր բնավորության ուրույն գծերով, զգացմունքներով, ուրույն աշխարհընկալմամբ։ Նա ունի՛ իրավունք՝ պահանջելու հարգել իր տեսակետն ու հետաքրքրությունները, քանզի այս աշխարհում, այս հասարակության մեջ առկա հարցերի շարքում կան պատասխաններ, լուծումներ, որոնք միայն իրեն են հասու, միայն իրեն են հասկանալի, միայն իրեն են ենթարկվելու։

Ինչպես ասել է Ա. Շոպենհաուերը. «Յուրաքանչյուր երեխա ինչ-որ չափով հանճար է, և յուրաքանչյուր հանճար՝ ինչ-որ չափով երեխա...»

Եվ եթե բոլորս համաձայն ենք, որ երեխան ունի՛ իրավունքներ և հանդիսանում է լիիրավ անհատ ծնված իսկ օրվանից, ուրեմն հարց է առաջանում. ի՞նչ իրավունք

ունենք մենք՝ մեծահասակներս, ամեն գնով ճնշելու երեխայի ինքնությունը նրան <<հարմար>> երեխա դարձնելու համար։

Հարկավոր է հիշել, որ այն, ինչին ծնողը, մանկավարժը հասնում են ճնշման կամ բռնության միջոցով, խիստ անկայուն է և անհաստատ։ Ավելին, այդ ճանապարհն ի սկզբանե մատնված է ձախողման, քանի որ հաղթական վերելքի փոխարեն առաջարկում է ձանձրալի, այլոց սխալներով լի, այլոց կայացման կրկնություն։ Ի՛նչ խոսք, պասիվ, իսկ առավել վատթար դեպքերում՝ «հլու» երեխան «հարմար» է մանկավարժի, ծնողի համար, սակայն արդյո՞ք արժե սեփական ժամանակավոր հարմարավետության համար կոտրել երեխայի ինքնուրույնությունը, ապագա երջանկությունը և, ի վերջո, անհատականությունը։ Այլ կերպ հարցադրումը ձևակերպելով՝ հարց տանք մեզ. «արժե՞ սեփական ձախողված կայացումը պարտադրել հաղթանակը նշմարող, արդարության կապույտ երկինքը դեռ տենսող երեխային»։

Ուստի ամեն անգամ, երբ գիտակցված կամ չգիտակցված կերպով, բղավոցներով կամ այլ միջոցներով փորձեք «ուղղել» կամ «ուղղորդել» երեխային, հարցրե՛ք ինքներդ ձեզ. «Ես ուզում եմ ունենալ պասիվ, թույլ, ենթարկվող, անկարող ու դժբա՞խտ երեխա, թե՞ ակտիվ, մտածող, ինքնուրույն և ուժեղ անհատ»։

Սիրե՛ք և սե՛ր տվեք ձեր երեխաներին։ Մեզ՝ բոլորիս, հատկապես՝ երեխաներին, սեր է պակասում։

Ուստի միակ ճիշտ ու նպատակաուղղված օժանդակությունը, որ կարող ենք առաջարկել սերն է ու դրա պարտադիր ներկայությունը՝ քաջալերման, խրախուսման, կառուցողական քննադատության, խորհրդատվության ու մեր դիտարկումներում զգոնության մեջ։ Այս ամենով է անհրաժեշտ լեփ-լեցուն լցնել

հմտությունների այն «ուսապարկը», որով երեխային պետք է ճանապարհ դնենք՝ հաղթանակի լեռն ի վեր։

Այսօր յուրաքանչյուրիս խնդիրն է պայքարել անառողջ մթնոլորտի դեմ, ստեղծել պայմաններ լավ ու որակյալ սերունդ ունենալու համար։ Քանի որ երեխաները մեր ապագան են, նրանք են մեր վաղվա օրվա առհավատչյան, նրանցից է կախված երկիրը ճիշտ ղեկավարելու, հայրենիքը պահել ու պահպանելու գաղափարը։Այս ամենին հասնելու համար մենք պետք է ստեղծենք պայմաններ երեխաներին ճիշտ դաստիարակելու և առողջ մթնոլորտ ձևավորելու համար։

Երեխայի ձևավորումն սկսվում է ընտանիքից, և հետո միայն նա կրթվում ու դաստիարակվում է դպրոցում, որտեղ ձևավորվում են նրա աշխարհայացքն ու կյանքի մասին պատկերացումները։ Երեխան ընտանիքի անբաժան մասն է։ Ծնողը պետք է լսի նրան, հնարավորություն տա նրան կարծիք հայտնելու։ Դրա համար ընտանիքում չպետք է լինի բռնություն, պետք է տիրի ջերմ ու խաղաղ մթնոլորտ, հարգանք մեկը մյուսի հանդեպ։ Պետք է դատապարտել ընտանեկան բռնությունը և հետևողական պայքարել դրա վերացման դեմ։ Իսկ դպրոցում բոլորին պետք է նայենք հավասարի աչքերով։ Ուսուցիչը պետք է հարգալից և սիրալիր լինի բոլորի նկատմամբ, նա չպետք է խտրականություն դնի երեխաների միջև։ Մենք պետք է գիտակցենք մանկության արժեքը, դրա պաշտպանության անհրաժեշտությունը։ Այո՛, մենք պետք է կառուցենք երեխաների կյանքի համար պիտանի աշխարհ։ Պետք է մեծ ներդրում կատարվի կրթության և առողջապահության զարգացման ոլորտներում։ Պետք է գործի «Մանկության զարգացումից դեպի մարդկության զարգացում» կարգախոսը։ Մենք պետք է պաշտպանենք երեխաների իրավունքները և ապահովենք դրանց զարգացումը։ Ներկա սերունդը պետք է զգա և տեսնի այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվում են իր սերնդի համար, և մասնակից դառնա այդ փոփոխություների իրականացմանը։

Հարկավոր է պահպանել երեխայի առողջությունը, ստեղծել անհրաժեշտ կենսապայմաններ, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ պաշտպանված լինի բռնությունից, ունենա մտքի և խղճի ազատություն, աշխատանքի և հանգստի իրավունք, անվտանգության ապահովման, պատվի ու արժանապատվության պաշտպանության իրավունք: Այս ամենի պատասխանատուն ու ամրագրողը մենք ենք: Երեխաները պետք է անվճար կրթության հնարավորություն ունենան՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ընտանիքի նյութական ու սոցիալական վիճակը: Եթե մենք ցանկանում ենք ձևավորել կիրթ ու գրագետ հասարակություն, մենք պարտավոր ենք այդ հասարակության մեջ ներգրավվել բոլորին: Կան ընտանիքներ, որոնք ապրում են վատ նյութական պայմաններում, բայց այդ ընտանիքներում մեծանում են արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաներ: Պետությունը պետք է հոգ տանի այդ երեխաների մասին, ապահովի նրանց կրթություն ստանալու հնարավորությունը: Պետությունը պետք է աջակցի տաղանդավոր երեխաներին համապատասխան մակարդակի կրթություն ստանալու հարցում: Պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունը իրականացնելու համար: Պետք է հետևողական լինենք, որ պետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները հատուկ ուշադրություն դարձնեն սոցիալական անապահով և բազմանդամ ընտանիքներին: Պետք է քայլեր ձեռնարկել նրանց հագուստով, գրենական պիտույքներով և դասագրքերով ապահովելու համար, որպեսզի բոլորն անխտիր կրկություն ստանալու հնարավորություն ունենան: Աշխատանք պետք է տարվի ուսումնական ծրագրերի և դասագրքերի արդիականությունն ու որակական մակարդակը բարձրացնելու համար: Երեխայի պաշտպանությունը և զարգացման ապահովումը պետք է լինեն նաև կրթական, մշակութային, հանգստի, ժամանցի և այլ բնագավառներում: Պետք է գիտակցենք, որ երեխան արժեք է, պետք է գիտակցենք նրա դերը հասարակության մեջ: Դրա համար

պետք է նպաստել դպրոցում և ընտանիքում երեխա-մեծ հարաբերությունների հումանացմանը: Մեր ապագան նրանց ձեռքերում է: Այսօր մենք պետք է պայքարենք այնպիսի դրույթների դեմ, որոնք խոչընդոտում են երեխաների իրավունքների լիակատար իրականացմանը: Պետք է օրենսդրական ու լրատվական դաշտը մաքրենք կեղծ տեղեկատվությունից, արգելենք ալկոհոլի և ծխախոտի գովազդները:

Դպրոցում պետք է ապահովվի բարոյաէթիկական մթնոլորտը, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ճիշտ ձևավորումը: Դպրոցը պետք է հարմարվի երեխաների կարիքներին, պահանջմունքներին և հետաքրքրասիրություններին: Դպրոցում պետք է սովորեցնել երեխային սեփական կարծիք ձևավորել և արտահայտել, հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել այլ երեխաների կարծիքի նկատմամբ: Դասավանդումը նպաստում է նաև հաղորդակցվելու, քննադատաբար մտածելու, վերլուծելու, համեմատելու և եզրակացություններ անելու, հմտություններ ու կարողություններ ձևավորելու հարցում:

Շատ հաճախ մենք՝ մեծերս, դաստիարակությունը շփոթում ենք երեխայի համեստ լինելու կամ հնազանդության հետ: Սակայն շատ հաճախ այս հնազանդ, դաստիարակված աշակերտները հասուն տարիքում զրկվում են կամային հատկություններից եւ ինքնուրույնությունից: Շատ հաճախ, որպեսզի երեխային ենթարկեցնեն, մեծերը կա՛մ ահաբեկում են, կա՛մ էլ դիմում ֆիզիկական ուժին՝ ծեծին:

Օրինակ՝ երբ երեխան քննությունից կտրվում է կամ ցածր գնահատվում, որոշ ծնողներ իրենց պարտքն են համարում երեխային մի լավ «դաս տալ» ծեծի միջոցով: Հարց է առաջանում. <<Իսկ կոտրված անհատը կարո՞ղ է իր տեղը գտնել աշխարհիս երեսին>>: Մի՞թե ծնողը ցանկանում է ոչնչացնել երեխայի մոտ անվախությունը. չէ՞ որ հենց վախից դրդվելով է մարդկանց մոտ ձևավորվում ստելու սովորությունը:

Կան նաեւ այնպիսի մարդիկ, որոնք անկեղծորեն մտածում են, որ ծեծի միջոցով նմանատիպ «դասը» ոչ միայն չի վնասում երեխային, այլև ունի դաստիարակչական նշանակություն:

Կարծում եմ, որ երեխայի նկատմամբ կիրառված բռնությունը ապագայում խորը հետք է թողնում նրա հոգեբանության վրա: Նրան աշխարհը թվում է անարդար, և սկսում է մտածել, որ ինքը չունի բավարար ուժ՝ այդ անարդարությունը հաղթահարելու համար: Ծեծը կոտրում է երեխայի ինքնավստահությունը եւ հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Եկե՛ք ընդունենք, որ երեխայի վարքը կախված է մեր վերաբերմունքից: Դժվար է, սակայն դա է միակ ուղին, որը տանում է դեպի նպատակակետ:

Դպրոցը չի կարող լինել պարզապես երեխաների դասապրոցեսի կազմակերպման համակարգ: Կրթությունը պետք է երեխային իր կարողությունները բացահայտելու հնարավորություն տա և օգնի ձեւավորվելու որպես անհատ, քանի որ մենք այսօր ապրում ենք մի աշխարհում, որին անհրաժեշտ են հումանիստական կրթական միջավայրում ձեւավորված քաղաքացիներ:

Այսպիսով, կարելի է ասել, որ դաստիարակության միջոցով ավագ սերունդը հասարակական-պատմական իր փորձն է փոխանցում նոր սերնդին, որպեսզի նրանք դառնան հասարակության հետագա զարգացումն ապահովող անհատներ:

Դաստիարակության նպատակներն ու խնդիրները որոշվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ՝ դպրոցում: Դաստիարակությունը նույնիսկ կարելի է համարել կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա: Դաստիարակությամբ է պայմանավորված տվյալ անհատի զարգացումը, որին նպաստում են անձի շփումը, հաղորդակցումը, որոնք իրենց անմիջական կնիքն են թողնում նրա

գործողությունների, արարքների վրա և որոնց միջոցով ձևավորվում է տվյալ անձի անհատականությունը:

Դաստիարակությունը մարդկանց բարոյական վարքագծի կարգավորմանն ուղղված գործընթաց է, որով էլ պայմանավորված է անձի գիտակցության ձևավորումը, զգացմունքներն ու համոզմունքները, հմտություններն ու սովորույթները: Դաստիարակությունը չընդհատվող գործընթաց է: Այն ընթանում է ողջ կյանքի ընթացքում, որի խորն արմատները դրվում են մանկության, դեռահասության և պատանեկության տարիներին:

Աշակերտն իր դերն ու տեղը հասարակության մեջ գտնում և ամրապնդում է իր իսկ վարքով և կազապահությամբ: Ցանկացած աշակերտի մասին թե՛ ուսուցիչը, թե՛ ծնողը կարծիք են կազմում՝ ուսումնասիրելով նրան այն <<փոքրիկ հասարակության>> մեջ, որտեղ նա ինքնարտայատվում է: Հենց այստեղ էլ ակնհայտ է դառնում ուսուցիչ-ծնող փախհամագործակցության անհրաժեշտությունը:

Այժմ մանրամասն ուսումնասիրենք ծնող-ուսուցիչ փոխադարձ համագործակցության և կապի մի քանի ձևեր: Դրանցից են՝ էլեկտրոնային հաղորդակցություն, ծնողական ժողովներ, հեռախոսակապ:

ԳԼՈՒԽ 1

ԾՆՈՂ-ՈՒՍՈՒՑԻՉ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Բնականաբար, երբ խոսք է գնում ծնող-ուսուցիչ փախադարձ կապի մասին, առաջնահերթ պետք է խոսել ծնողական ժողովների և դրանց դերի մասին: Ծնողական ժողովը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության ավանդական ձև է: Ծնողական ժողովները կարող են լինել՝ համադպրոցական, դասարանական, թեմատիկ և կազմակերպչական: Դրանցից յուրաքանչյուրը հետապնդում է հստակ նպատակ:

- Համադպրոցական ծնողական ժողովներ. Այս ժողովների ժամանակ հրավիրվում են դպրոցի բոլոր սովորողների ծնողները և քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերվում են բոլորին և ունեն համադպրոցական նշանակություն: Բնականաբար, այստեղ քննարկվում են ողջ դպրոցին առնչվող խնդիրներ և հարցեր՝ յուրաքանչյուր դասարանի ներքին խնդիրներն ու հարցերը թողնելով դասարանական ծնողական ժողովներին: Քննարկվում են այնպիի հարցեր, ինչպիսիք են էքսկուրսիաները, շաբաթօրյակները, որևէ միջոցառման համար իրականացվող զարդարանք և այլն:

- Դասարանական ժողովներ. Այս ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝ մանկավարժներ և ծնողներ, որպեսզի զրուցեն տվյալ դասարանում սովորող երեխաների հետ առնչվող հարցերի շուրջ:

Երբեմն ծնողական ժողովները վերածվում են աշակերտներին գովաբանելու կամ պախարակելու համար նախատեսված հանդիպման, որն էլ հիասթափութիուն է առաջացնում որոշ ծնողների մոտ՝ ստիպելով նրանց խուսափել նմանատիպ հանդիպումներից: Հակամանկավարժական քայլ է համեմատելը մի ծնողին մյուսի հետ, մի առարկան գետագնահատելը և գերկարևորելն այլ առարկաների

համեմատությամբ՝ ելնելով որոշակի գուցե նաև սուբյեկտիվ գործոններից, նախատել որևէ ծնողի աշակերտի ոչ պատշաճ վարքի համար:

Ծնողի գերնպատակն է լավ ճանաչել իր զավակին՝ որպես աշակերտի: Ծնողներն ու ուսուցիչները նույն սովորողների դաստիարակներն են և ունեն ընդհանուր նպատակներ:Հետևաբար, որպեսզի սովորողի կրթության կազմակերպումն ու առօրյան լինեն լիարժեք,իսկ դաստիարակությունն՝ առավել արդյունավետ, անհրաժեշտ պայման է ծնող-ուսուցիչ սերտ կապը և փոխադարձ ընբռնումն ու համագործակցությունը: Դպրոցն աշակերտին տալիս է գիտելիք, որը գործնականում կիրառելի է դառնում ինչպե դպրոցում, այնպես էլ՝ տանը, փողոցում: Այս պարագայում կարևորվում է գործնական փորձը: Սովորողի ներդաշնակ զարգացման համար վերոնշյալ որակները խիստ անհրաժեշտ են: Ընտանիքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից սովորողները միայն շահում են: Թե՛ ծնողը, թե՛ ուսուցիչը կարող են դաստիարակել աշակերտին իրենց իսկ սեփական օրինակով:

Ծնողական ժողովների արդյունավետության գրավականը նախապես կազմած պլանն է, որով պետք է առաջնորդվի ուսուցիչը ծնողական ժողով հրավիրելիս: Ասել է , թե նա պետք է ունենա հստակ նպատակ, ներկայացնի այն հրատապ խնդիրները, որոնց լուծման համար էլ հրավիրվել է ծնողական ժողովը, առաջարկի այդ խնդիրները լուծելու եանակներ՝ միաժամանակ հույժ կարևորելով ծնողի կարծիքն ու տեսակետը ասվածի վերաբերյալ:

Դասղեկն ամեն պարագայում պետք է հաշվի նստի ծնողի կարծիքի հետ, քանի որ գործ ունի չափահաս անձի հետ: Հետևաբար, ծնողական ժողով հրավիրելիս պետք է հշվի առնել, թե ե՞րբ է ծնողներին հարմար դպրոց այցելել ծնողական ժողովի համար: Դասղեկը նախապես պետք է հակիրճ ներկայացնի, թե ինչի՞ն է նվիրված լինելու հանդիպումը. ի՞նչ հրատապ հարցեր են քննարկվելու: Ծնող- դասղեկ

շփումը պետք է լինի ոսկե միջինը. անմիջական, բայց և միևնույն ժամանակ էթիկայի բոլոր կանոններին համապատասխան: Պետք է հարցերը քննարկել ըստ առաջնահերթության և փորձել ամփոփել հանդիպումը հստակ ժամանակահատվածում՝ արժևորելով թե՛ ծնողի, թե՛ դասղեկի ժամանակը: Հանդիպմանը բարեհաջող ընթացք տալու համար պետք է սկսել դրական նոտայով, վերջում միայն քննարկելով փոքրիշատե տհաճ և անհանգստություն պատճառող հարցերը: Ծնողը պետք է զգա, որ ամեն-ինչ ուղղված է շակերտների բարօրությանն ու աջակցությանը: Ծնողների կողմից վատ է ընկալվում դասղեկի՝ սուբյեկտիվ և ոչ անաչառ վերաբերմունքը ոչ միայն ծնողների, այլև աշակերտների նկատմամբ:

Ցանկացած պլանավորված գործընթացի պես, ծնողական ժողովը նույնպես պետք է հստակ ընթացակարգով իրականացվի: Այն պետք է բաղկացած լինի տրամաբանական հերթափուլերից. նախ պետք է ծնողներին նախապատրաստել ծնողական ժողովին: Այն հնարավոր է իրականացնել այն պարագայում, երբ դասղեկը հայտնում է ծնողներին հանդիպման նպատակը, քննարկվող հրատապ հարցերը, հանդիպման մասնակիցներին է ճշտում, կարգի է բերում դասասենյակը, նախապատրաստում է սովորողների առաջադիմության թերթիկները, որոնց առաջնահերթ կարևորություն այնքան էլ չի տրվի, որպեսզի ոչ գերազանց սովորող աշակետների ժնողները հնարավորինս դրական միջավայրում իրենց զգան: նհրաժեշտության դեպքում ծնողների հետ պետք է իրականացվի հոգեբանա-մանկավարժական խորհրդատվություն. այս հարցը հատկապես առաջնահերթ է ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների համար: Հանդիպման գրեթե ավարտին պետք է իրականացնել արդյունքների ամփոփում, կաարել եզրակացություններ և ըդշնդունել որոշումներ: Ծնողական ժողովի արդյունքների մասին անհրաժեշտ է տեղեկացնել տնօրինությանը:

Լինում է դեպքեր, երբ ամիրաժեշտ է լինում հանդիպել ոչ թե դասարանի բոլոր ծնողներին, այլ նրան միայն մի մասին: Որպեսզի ուսուցիչ-ծնող-սովորող փոխադարձ համագործակցությունը ավելի մտերմիկ և ընկերական երանգ ստանա, կարելի է կազմակերպել համատեղ արշավներ,էքսկուրսիաներ:

- Թեմատիկ ծնողական ժողովներ.Այս ժողովներն անցկացվում են որևէ կոնկրետ թեմայով, որն ունի առաջնահերթ կարևորություն տվյալ պահին: Նմանատիպ ծնողական ժողովներն ունեն բոլոր այն տրամաբանական հերթափուլերը, որոնք ունի ծնողական ժողովի նախորդ տեսակը: Կրկին պետք է նախապատրաստական հարցաթերթիկներ կազմել և՛ ծնողների, և՛ սովորողների համար: Հարցաթերթիկների լրացումից հետո կատարվում է արդյունքների քննարկում:Ցանկալի է որ ծնողի ու իր երեխայի վերջնական տեսակետներն համընկնեն:Այս հարցում մեծ դեր է խաղում դասղեկի ուղղորդումը՝ հիմնվելով սովորողի առաջադիմության և ընդունակությունների վրա:Պետք է հաշվի առնվի նաև սովորողի նախասիրություններն ու հակումները: Շատ կարևոր է ծնողներին միշտ տեղյակ պահել դպրոցում տեղի ունեցող անցուդարձին:

- Կազմակերպչական ծնողական ժողովներ. այս ծնողական ողովների նպատակն է միահամուռ ուժերով լուծել որոշ կազմակերպչական հարցեր և խնդիրներ: Դրանք, բնականաբար, կարող են լինել տարբեր բնույթի. կարող են վերաբերել ընթացիկ հարցերի, միջոցառումների, չնախատեսված դեպքերի, դասարանական միջոցառումների, էքսկորսիաների, արշավների, զբոսանքների և այլն: Սովորողները մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են մասնակցում կազմակերպչական աշխատանքներին: Երբ քննարկումներն ավարտվում են և աշխատանքները բաժանվում, սկսվում են կազմակերպչական աշխատանքները: Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող-ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա ու ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ:

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Այսօր ժամանակակից տեխնոլոգիաները մեծ հնարավորություններ են ընձեռում ոչ միայն երեխաներին, այլև ծնողներին: Մասնավորապես, ժամանակակից գերհզոր և գերզարգացած տեխնիկական միջոցները հնարավորություն են ընձեռում նողներին անմիջական կապ և շփում ունենալ աշակերտների ծնողների հետ: Ծնողները ունեն դասղեկի և ուսուցիչների հետ կապ պահպանելու շուրջօրյա հնարավորություն, որ էլ իր հերթին իր դրական անդրադարձն է ունենում աշակերտների կատարողականության վրա: Այսօր բազմազան են այն առցանց հարթակները, որտեղ ուսուցիչները, ծնողներն ու աշակերտներն ունեն ազատ կերպով շփվելու հնարավորություն: Նմանատիպ հարթակներում կարելի է քննարկել բոլոր հուզող հարցերը՝ միաժամանակ հնարավորություն ունենալով լսելու և ընկալելու համադասարանցիների և նրանց ծնողների կարծիքն ու տեսակետը քննարկվող թեմայի վերաաշբերյալ:

Ճիշտ է, ժամանակակից ծնողներն ունեն որոշ գիտելիքներ e-mail, viber, watsapp,mesenger ծրագրերի, facebook,telegram,instagram,twitter և այլ սոցիալական ցանցերի մասին,սակայն առաջարկում եմ զրույցներ միջոցով անընդհատ թարմացնել ծնողների գիտելիքները ժամանակակից հաղորդակցման գործիքների, դրանց ընձեռնած հնարավորությունների ու արդյունավետության մասին:Ես որպես ինֆորմատիկայի ուսուցչուհի,այն հարթակում,որտեղ ծնողների խումբ կա ստեղծված, կտեղադրեմ օրինակ՝էլեկտրոնային փոստի մանրամասների մասին պատմող հղումը՝ http://en.wikipedia.org/wiki/Email/, ծնողների գիտելիքները թարմացնելու նպատակով:

Հարկ է նշել, որ ժամանակակից զարգացած տեխնոլոգիական միջոցները խնայում են ուսուցիչների և ծնողների ժամանակը և այլ ռեսուրսներ: Եթե ծնողը ժամանակի սղության պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ ուսուցիչը պարտադիր պետք է անընդհատ կապի մեջ լինի,էլեկտրոնային նամակների տեսքով անհատական տեղեկատվություն հաղորդի երեխայի մասին:

Խնայելով ժամանակը և տարածությունը, կարելի է ծնողական ժողով հրավիրելուց առաջ որևէ սոցիալական հարթակում քննարկել ծնողների հետ ժողովի թեման,նպատակները, դրա կարևորությունն ու հրատապությունը:

Հատկապես համաճարակի ընթացքում զգացվեց զարգացած տեխնոլոգիայի մեծ դերը ներկայիս կրթական համակարգի վրա: Առցանց հարթակներում ուսուցիչը կարող է տեղադրել որևէ բաց դասի տեսագրություն, որի մեջ յուրաքանչյուր ծնող կարող է տեսնել, թե ինչպե՞ս է իր երեխան իրեն դրսևորում դասի ժամանակ: Կարելի է նաև այդ նույն դասի տեսանյութը քննարկել նույն հարթակում և կատարել եզրակացություններ:Այսօր շատ ուսուցիչներ իրենց դասղեկական դասարանների համար ունեն առցանց հարթակներ, որտեղ պարբերաբար տեղադրում են տեսաձայնագրություններ և լուսանկարներ՝ ծնողներին էլ ավելի ներգրավվելով և իրազեկ դարձնելով դասընթացին:

Այսօր ուսուցիչը կարող է ծնողների կարծիքին տեղեկանալ առցանց հարցաթերթիկների միջոցով: Նա կարող է նույնիսկ https://forms.gle/BxjpjGptZYUU6EddA հարցաթերթիկների միջոցով հարցում իրականացնել և տեղեկանալ բոլոր այն տարաձայնություններին, առաջարկություններին, որ ծնողներից յուրաքանչյուրն է ներկայացնում կրթական գործընթացի վերաբերյալ:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հետազոտությունից պարզ դարձավ, որ ծնող-ուսուցիչ փոխադարձ կապն իր դրական կնիքն է դնում աշակերտների առաջադիմության, իրազեկամ, զարգացվածության մակարդակի վրա, բարելավում է թե՛ ծնողների, թե՛ աշակերտների ներգրավվածությունը կրթական գործընթացում: Խոսելով և բարձրաձայնելով առաջացած հարցերի և խնդիրների մասին՝ հնարավորություն է ընձեռվում դրական հետք թողնել աշակերտների հասարակական կարողունակության վրա: Սա տալիս է նրանց հնարավորություն վերանայելու իրենց վարքագիծը և որոշակի շտկումներ իրականացնելու՝ միտված այդ փոքրիկ հասարակական միջավայրում իրենց դերը ավելի դրական դարձնելուն: Եվ՛ ծնողը, և՛ ուսուցիչը անընդհատ, փոխադարձ համաձայնությամբ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները և կիրառեն նոր հմտություններ՝ սովորողի ուսման որակը բարձրացնելու համար: Թե՛ ընտանիքը, թե՛ դպրոցն այն հենասյուներն են, որոնք հիմք են հանդիսանում աշակերտի զարգացման և դաստիարակության հարցում: Ուստի երկկողմանի համագործակցությունը կգործի միայն ի շահ այդ աշակերտի: Ծնողի և ուսուցչի փոխադարձ համագործակցություն նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն՝ սովորողի հաջողությունների և կրթության որակի բարձրացմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Սույն հետազոտության սպասելիքներն արդարացան: Հետազոտությունը ցույց տվեց, որ ծնող- ուսուցիչ սերտ համագործակցությունը բարձրացնում է սովորողի հաճախելիության մակարդակը, դրական է անդրադառնում սովորողի վարքի և առաջադիմության վրա, բարձրացնում է ծնողի վստահության մակարդակը թե՛ կրթական հաստատության, թե՛ ուսուցիչների նկատմամբ:

Հարկ է նաև խոսել այն դրական ազդեցության մասին, որ ծնող-ուսուցիչ կապը թողնում է հենց ծնողի վրա. ծնողը զգում է, որ իր կարծիքն ու տեսակետը արժևորված են, նրա սկսում է հարգել, ընդունել և գնահատել կրթական գործընթացում ներգրավված յուրաքանչյուր մասնակցի, ստանում է օգտակար տեղեկություն աշակերտների, ուսումնական ծրագրերի մասին:

Այսպիսով, ամփոփելիս հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքում տեղ գտած ողջ վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ դպրոց-ուսուցիչ-ծնող եռանկյունին այն դրական կնիքն է, որ իր անքակտ հետքն է թողնում սովորողների կատարողականության, էթիկական և բարոյական վարքագծի ձևավորման հարցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------էջ 2

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1

ԾՆՈՂ-ՈՒՍՈՒՑԻՉ ՓԱԽԱԴԱՐՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ----------էջ 17-20

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑԻՉ- ԾՆՈՂ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ----------էջ 21-22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------էջ 23

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ----------էջ 21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա, Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, <<Մանկավարժ>> հրատ, Երևան, 2005, էջ 44-60

2. Պետրովսկի Ա. Վ., <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>>, <<Լույս >> հրատ. Երևան 1977

3. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում, 2020, Երևան, էջ 3

4. Մարության Ս. Ա, Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, էջ 39